Հավելված 1

Վիրաբուժություն

Թեմա՝ Վիրաբուժություն

Դասընթացի **գործնական** և **տեսական** բաղադրիչների տարանջատումը համապատասխանաբար **5:1**

Վերապատրաստման վայր՝ «Աստղիկ» բժշկական կենտրոն

«Միքայելյան» բժշկական կենտրոն

Վերապատրաստման պատասխանատու՝ **Վարդան Բորոզան**

Սուրեն Ստեփանյան

Տևողություն՝ 4 շաբաթ (20օր)

Թեմա	Նկարագիր	Տևողություն (1 ժամ՝ 60ր)	Պատասխանատու	Ակնկալվող արդյունք
1. Ժամանակակից հետազոտության մեթոդները, միջոցները, դրանց վերլուծությունները վիրաբուժական հիվանդությունների ախտորոշման համար	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	6 ժամ 9:00-15:00	Սուրեն Ստեփանյան Վարդան Բորոզան	Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան. • անցկացնել տարբերակիչ ախտորոշում, գնահատել և վարել վիրաբուժական տարբեր խնդիրները,
2. Վնասվածքներ, ախտորոշման ալգորիթմը, բուժական	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում	12 ժամ 9:00-15:00	Սուրեն Ստեփանյան Վարդան Բորոզան	

[1] Ընդհանուր նկարագիր - *ՀՀ մարզերից և Արցախից տեղահանված Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:*

1 ժամ ընդմիջում նախատեսված է դասընթացի յուրաքանչյուր օրվա ընթացքում, որը ներառնված չէ /9:00-15:00/ 6 ժամվա մեջ

միջոցառումները: Ամբուլատոր վիրաբուժություն, առանձնահատկությունները	• Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում			• ախտորոշել շտապ բուժօգնություն պահանջող վիճակները վիրաբուժության մեջ, տիրապետել հաճախ հանդիպող վնասվածքների առաջնային վիրաբուժական մշակման ժամանակակից մոտեցումներին և հմտություններին • հիվանդին նշանակել բուժում/դեղամիջոցներ՝ ժամանակակից ուղեցույցներին համապատասխան, • վարել ծանր, ծայրահեղ ծանր վիճակներում գտնվող հիվանդին, տիրապետել ինֆուզիոն և տրանսֆուզիոն թերապիայի հիմնարար սկզբունքներին • կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն՝ հիվանդին անվտանգ և արդյունավետ խնամք ապահովելու համար: Բազմաօրգան վնասվածքների դեպքում հիվանդի վիճակի գնահատման, անհրաժեշտ անհետաձգելի միջոցառումների և հարկ եղած դեպքում տեղափոխման ճիշտ կազմակերպում
3. Կլինիկական վիճակները վիրաբուժությունում՝ հեմոստազի խանգարման համախտանիշ, հեմոդինամիկայի և ցիրկուլյացիայի սուր խանգարման համախտանիշ, ցավային համախտանիշ, բազմաօրգան անբավարարության համախտանիշ	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	12 ժամ 9:00-15:00	Վարդան Բորոզան Սուրեն Ստեփանյան	
4. Աբդոմինալ վիրաբուժություն, նոր մոտեցումները վիրահատական մեթոդի ընտրության հարցում, առանձնահատկությունները սահմանափակ ռեսուրսների պայմաններում, առաջին կամ երկրորդ ասիստենտի կարգավիճակում մասնակցություն մինչև 10 վիրահատության	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	24 ժամ 9:00-15:00	Արթուր Սահակյան Վարդան Բորոզան	
5. Օնկովիրաբուժություն, հաճախ հանդիպող ուռուցքների վաղ հայտնաբերում և ճիշտ վարում	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	6 ժամ 9:00-15:00	Վարդան Բորոզան Սուրեն Ստեփանյան	
6. Անհետաձգելի վիրաբուժություն, ծանոթացում նոր ալգորիթմներին, սահմանափակ ռեսուրսների պարագայում աշխատելու առանձնահատկությունները	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	18 ժամ 9:00-15:00	Վարդան Բորոզան Սուրեն Ստեփանյան	

7. Պլանային վիրաբուժության առանձնահատկությունները, ծանոթացում վիրահատական նոր մեթոդիկաներին	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	18 ժամ 9:00-15:00	Վարդան Բորոզան Սուրեն Ստեփանյան	
8. Ինֆուզիոն և տրանսֆուզիոն թերապիան վիրաբուժությունում, հեղուկների և էլեկտրոլիտների հաշվարկ, տրանսֆուզիայի ցուցումները, իրականացման հմտությունները	• Առավոտյան համայց • Հիվանդների քննարկում • Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների • Տեսական հարցերի քննարկում	6 ժամ 9:00-15:00	Վարդան Բորոզան Սուրեն Ստեփանյան	
• Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ)	Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում	12 ժամ *Տես. – 12ժ*	Աննա Շիրինյան	
• Դասախոսություններ ՀԳԲԳ-ում	• Գերիատրիայի հիմունքները: Ծերացումը որպես 21-րդ դարի հիմնախնդիր • Բժշկութուն և իրավունք • Ցավի կառավարում • Ալերգիկ հիվանդություններ • Արյունաբանություն	6 ժամ 12:00-15:00 *Տես. – 6ժ*	Արթուր Թորոսյան Նարինե Մովսիսյան Վիոլետա Զոփունյան Արմինե Հակոբյան Երվանդ Հակոբյան	
• Համակարգչային գրագիտության դասընթացներ[2] ՀԳԲԳ-ում	MS Word, MS Excel, MS PowerPoint ծրագրեր և համացանց	24 ժամ	Սեդա Աբգարյան	
• ՇՄԶ արդյունքների ամփոփում[3]	Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում	2 ժամ 14:00-16:00	Համբարձում Սիմոնյան Առնո Հովհաննիսյան	

[2] Ընտրովի է և ներառված չէ 120 ժամի մեջ

[3] Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները ներկայացնում են կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցներն օգտվում են Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից: